ԳՐԱԿԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՈԳՈՒ ԱՆԱՆՅԱՆԵԼԻ ԲԵՐԿՐԱՆՔ*

«Արտի բերկրեցելոյ երեսք ծաղկին.
եւ ոգի որ ի տրտմութեան է՝ թախծեալ շրջի»:
(ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ ԺԵ 13)

Չչարաշահելու համար Ձեր, պարոն դատավոր, դատավարական կազմի և դահլիճում ներկա գտնվողների համբերատարությունը և խոնարհաբար հայցելով ձեր բոլորի ներողամտությունը, թույլ տվեք մի քանի տարի ետ վերադառնալ և, որպես չափահաս ու քիչ թե շատ կյանքի բովով անցած անձնավորություն, անշուշտ, իհարկե՝ ինչպիսին եք նաև դուք բոլորդ, խոսել մանկական մի առաքինի ու սուրբ զգացման մասին: Կրկին հայցելով ձեր ներողամտությունը, նախ ասեմ, որ ես որևէ հավակնություն չունեմ մարդկային հոգեկան ներաշխարհի երևութական պոռթկումների և դրանց ներգործությամբ դրսևորվող պատճառա-հետևանքային կապերի մեջ ներթափանցելու և նոր, յուրովի վերլուծություններ կատարելու: Քավ լիցի: Այդ վերլուծությունը թողնում եմ հոգեբաններին:

Այստեղ նստածներից բոլորդ էլ մանուկ հասակ եք ունեցել, ապրել այդ տարիքի քաղցր և դառը օրերը, օրեր, որոնք ժամանակի ընթացքում մոռացության են մատնվել, անհետ մշուշվել անցած ձեր կյանքի տարիների հորձանուտում: Սակայն կան անձնական ինքնապրումի այնպիսի դրսևորումներ, պահեր, որոնք, անկախ քո կամքից, ներթափանցում են, կարծես մխրճվում քո հոգու խորքը՝ այլևս այնտեղից դուրս չգալու և մշտնջենապես բնակվելու տվյալ անձի քա՛ղցր ու անդառնալի՛ հիշողությունների լաբիրինթոսում: Ինչո՞ւ եմ ասում նորություն ասած չեմ լինի: Որովհետև այն մասին, որ պիտի խոսեմ, յուրաքանչյուր ոք ապրել և կամ ապրում է յուրովի, և իրեն թվում է, թե աստվածաշնորհ այդ մարդկային զգացման ըմբռնումը միա՛յն և միա՛յն իրեն է շնորհված: Հաստատ համոզված եմ, որ բոլորովին էլ այդպես չէ: Տարբերությունը միայն ընկալման մեջ է՝ կապված տվյալ անձի հոգեբանության և անձնական խառնվածքի յուրօրինակությանը:

Ձերկարաբանելու համար ասեմ կոնկրետ, որ խոսքս մանկական անմեղ, առաքինի և հավերժորեն անմոռաց սիրո մասին է: Այս պարագայում, այսինքն՝ մանկական հասակի երեխայի այս առաքինազարդ զգացման համար, «սեր» ասելն, ինձ թվում է, այնքան էլ տեղին չէ, բնորոշիչ չէ, քանի որ լիարժեք սիրո զգացումը հասունանում է միայն երիտասարդի և չափահաս անձնավորության մոտ: Մանկական սերը, սակայն, իր թերի լինելով հանդերձ, մի յուրատեսակ, անբացատրելի հոգեկան ապրում է, բերկրալի գորովանք, երկու երկսեռ մանուկների փոխհարաբերության տենչանքի մի անմեկնելի հույզ...

---

* Շարունակությունը տե՛ս թիվ Դ, էջ 162:

Ինչևէ, երբ ես տարիներ առաջ ընդունվեցի հանրակրթական դպրոցի առաջին դասարան, մեր դասղեկ տիկին Մուրադյանն ինձ նստեցրեց աշակերտական մի նստարանի, որի երկրորդ նստատեղն արդեն զբաղեցրել էր մի սիրունատես աղջիկ: Առաջին իսկ օրից ես ներքին մի անբացատրելի զգացմամբ համակվեցի դեպի նա: Թեև առաջին իսկ հանդիպումից մենք, ինձ թվում է, համակրեցինք միմյանց, բայց ես իմ վերաբերմունքի մեջ միշտ զգուշավոր էի նրա նկատմամբ, ամոթխած: Իմ կողմից այսպիսի վարվելակերպի դրսևորումը ոչ թե վախի կամ անհամարձակության հետևանք էր, այլ իմ էության ներաշխարհի շրջադարձային վերափոխման հետ կապված ինչ-որ անբացատրելի զգացման արդյունք: Մեր հանդիպման հենց առաջին պահից ես սկսեցի նրա նկատմամբ մի յուրատեսակ, ինձ համար անսովոր վերաբերմունք դրսևորել, որն աստիճանաբար վերածվեց անմեղ սիրո տածումի: Ա.... էին կոչում նրան: Այստեղ արդեն խիստ անհարիր է հոլովել նրա անունը, քանի որ...

Եվ այսպես, երեք տարի համարյա ամեն օր մենք շփվում էինք միմյանց հետ: Պատճառն, իհարկե, բոլորիդ արդեն պարզ հայտնի է՝ ամեն օր դպրոց հաճախելը: Հանրակրթական դպրոցում ուսումնական այս երեք տարիների ընթացքում ինչպես ես խորանում էի նախնական՝ սկզբնական գիտելիքներ ձեռք բերելու գործում, այնպես էլ այս ընթացքում մեր երկուսի մտերմիկ շփումներից իմ ներաշխարհի փոփոխությունները զգալի էին: Դեպի այդ քնքույշ էակն իմ անմեղ տենչանքները գնալով ավելի էին խորանում, ծավալվում և կարծես՝ բարդանում աստիճանաբար ընդգրկելով ողջ էությունս:

Մայիսյան մի արևաշող, պայծառ առավոտ տիկին Մուրադյանը մեր դասարանը պետք է տաներ Երևանի պատմության պետական թանգարան: Եթե չեմ սխալվում՝ դեռևս առաջին դասարանում էինք: Բոլորս համակված էինք արտասովոր աշխույժով: Մեզ համար չափազանց անսովոր էր և երանական խորհրդավոր՝ մշակութային այդպիսի օջախ հաճախելը, առավել ևս՝ ծանոթանալու նրա ցուցադրանքներին: Դասղեկը մեզ շարք կանգնեցրեց, և մենք, զույգեր կազմած, տղա և աղջիկ, շարասյունով դուրս եկանք փողոց և շարժվեցինք դեպի մեզ համար անծանոթ մշակութային այդ օջախ: Անշուշտ իմ զուգընկերն էր Ա-ն: Մենք զույգերով ձեռք-ձեռքի բռնած էինք քայլում: Ուրախից օգտվելով, ես անասելի գորովանքով և նրբազգաց քնքշությամբ էի ափիս մեջ առել նրա փափկիկ ու նուրբ թաթիկը: Մեր ձեռքերի հպումից նրա ողջ էությունը կարծես թափանցել էր հոգուս խորքը: Անտարակույս ես այդ պահին գտնվում էի մանկական անմե՛ղ երանության աշխարհում... Ես խիստ զգուշավորությամբ էի բռնել նրա ձեռքը: Թեև առաջին անգամն էր մեր, այսպես ասած, ձեռնագուրանքը, բայց այն իմ անձի, երևի թե՝ նաև նրա համար եղավ մեր մտերմությանը նպաստող որոշիչ գործոն: Ես ոչ թե երկչոտություն, անհամարձակություն, այլ մանկական անմե՛ղ ասպետական վերաբերմունք ցուցաբերելով ամեն կերպ ձգտում էի ամենադույզն իսկ չափով չցավեցնել նրա քնքո՛ւշ ու փափկիկ ձեռքը:

***

Երևանի պատմության պետական թանգարանը գտնվում էր Ներկայիս Մաշտոցի պողոտայի արևմտյան ծայրամասում, այժմյան Ծաղկաձոր շուկայի դիմաց: Այն մեկ հարկանի աղյուսաշեն ընդարձակ մի շինություն էր, որ այժմ էլ, ի բարեբախտություն մեզ, շարունակում է իր գոյությունը հոգատար ձեռքերում և կազմում պարսկական մզկիթի համակառույցի հյուսիսային հատվածի մի մասը:

ինչո՞ւ եմ ասում՝ ի բարեբախտություն մեզ, որովհետև Երևան քաղաքի գլխավոր հատակագծի կենսագործման ընթացքում, 30-50-ական թվականներին, Հայաստանի իշխանությունները, մեզ հայտնի ինչ-ինչ անհիմն պատճառներից ելնելով, բարբարոսաբար քանդեցին-վերացրեցին և հողին հավասարեցրին մեր պատմության ու մշակույթի բազմաթիվ անմահ կոթողներ, այդ թվում նաև՝ Երևանի պարսից խանի շուրջ երեքհարյուրամյա պալատը՝ իր բոլոր հարակից շինություններով՝ այսպիսով հավերժական ամոթի խարանը դաջելով մեր ժողովրդի հազարամյակների ստեղծագործ մտքի ջի՛նջ ակունքներին: Ինձ համար, այնուամենայնիվ, անհասկանալի և հանելուկ մնաց, թեև, ես համոզված եմ, մեր ժողովուրդը անսահմանորեն գոհ մնաց այդ բանից. ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքներ հաշվի առնելով պահպանվեց և անխաթար մինչև մեր օրերը հասավ պարսկական այս չքնա՛ղ կրոնական շինությունը... Երևի թե քաղաքի գլխավոր հատակագիծը կազմող մեր հանճարեղ ճարտարապետը Մաշտոցի պողոտան նախագծելիս մատիտը խիստ զգուշավորությամբ էր գործածել և անխաթարորեն անցնել մեր դարավոր հարևան ժողովրդի կրոնական-մշակութային այդ չափազանց արժեքավոր հուշակոթողի հարևանությամբ:

Հավերժական փա՜ռք և մեծարա՜նք նրան:

Ինչևէ, այս հարցի կապակցությամբ գնահատանքի խոսքը թողնենք մեր հետագա սերունդներին՝ մասնագետներին և մտավորականներին: Թույլ տվեք ասել միայն՝ ժխտելով ժողովրդի դավանանքը և նրա անժխտելի արդյունք հանդիսացող ճարտարապետության և մշակույթի այլ և այլ նվաճումները, այդ կերպ դուք անառարկելիորեն ժխտական դիրք եք հանդես բերում նաև հենց տվյալ բուն իսկ ժողովրդի գոյության հարատևման նկատմամբ: Եվ այժմ էլ ամո՛թ ու անարգանք նրանց հասցեին, ովքեր տկարամտորեն և նեղմտորեն շարունակում են այդպես մտածել և գործել՝ այդ կերպ մոռացության տալով մեր ժողովրդի դարավոր տառապալից անցած ուղին...

Պատմության թանգարան մուտք գործելու առաջին իսկ պահից իմ առջև բացվեց մի նոր, անծանոթ աշխարհ: Այս առթիվ իմ մանկական անփորձունակ տպավորություններն անսահման էին, անընդգրկելի: Մշակութային սույն օջախ իմ նորամուտն ինձ մղեց ուսանելի մի նոր դպրոց, մի նոր հաստատություն: Ես հիացական, ակնապիշ դիտում էի ցուցասրահներում ներկայացված բոլոր ցուցաղրանքները, որոնք ինձ հեքիաթային էին թվում, ո՛չ մարդկային մտքի և ձեռքի արգասիք: Իմ տպավորությունների մեկնաբանությունն ավելորդ է շատ պա՛րզ պատճառով. չէ՞ որ ես առաջին և սկզբնավորող քայլերն էի կատարում դեպի մարդկային կյանքի ճանաչողություն, չէ՞ որ ես իմ կյանքի այս փոքրիկ հատվածում առաջին անգամ բարեբախտությունն էի ունենում մտովի և, այսպես ասած, դիտողականությամբ շփվելու և նախնական ծանոթություն ձեռք բերելու մեր ժողովրդի պատմության և մշակույթի, մեր հայրենի արարչագործ բնության առարկայացած իրողություններին:

Ի թիվս մարդկային ստեղծագործ մտքի արգասիք հանդիսացող բազմաթիվ այս ցուցանմուշների, թանգարանում ներկայացված էին նաև մեր չքնա՛ղ բնության բուսական և կենդանական աշխարհի ճաշակալուր նմուշատեսակներ:

Թանգարանից դուրս գալուց հետո, վերադարձի ողջ ճանապարհին, քնքշորեն նրա ձեռքը բռնած, ես իմ մանկական մտորումներն ու խոհերը կիսում էի Ա-ի հետ:

Այդ օրն իմ առջև բացվեց հեքիաթային մի հրաշք աշխարհ...

***

Իմ ներաշխարհային մտերմությունը Ա-ի հետ շատ կարճ տևեց. ընդամենը երեք տարի: 1942 թվականին ԽՍՀՄ լուսավորության նախարարության որոշումով դպրոցների կառուցվածքային համակարգը փոխվեց՝ վերածվելով առանձին-առանձին արական և իգական դպրոցների: Այս չարաբաստիկ որոշումով իմ և Ա-ի դպրոցական մտերմական հարաբերություններին ժամանակավորապես դադար տրվեց: Ինչո՞ւ եմ ասում՝ ժամանակավորապես: Բանն այն է, որ այդ որոշումից դեռևս մեկ տարի էլ չէր անցել, երբ Ռուսաստանից գաղթականներ եկան և բնակություն հաստատեցին մեր տանը: Հայեր էին նրանք, երկու ծեր ամուսիններ: Ծնողներիս հետ զրույցի առաջին իսկ պահից, ի ցավ մեզ, պարզվեց, որ նրանք նույնպես վանեցիներ են: 1915 թվականի Մեծ եղեռնի օրերին մազապուրծ փախել էին իրենց հայրենի հողից և բնակություն հաստատել Ռուսաստանի Դոնի-Ռոստով քաղաքում՝ Նոր Նախիջևանում: Անասելի ողբերգական է այն փաստը, որ հայ ժողովուրդը, դառնալով գաղթական և զրկվելով իր հայրենի հողից ու ջրից, իր առաքինի, բարեպաշտ կյանքից, ապավինելով օտարի բարեհոգ, հյուրընկալ, մարդասեր վերաբերմունքին, ժամանակ անց կրկին դարձել է գաղթական՝ ձգտելով, սակայն վերջնականորեն չգտնելով իր բնակության մշտնջենական հանգրվանը:

Սրտիցս արյուն է կաթում, երբ վերհիշում եմ այս բոլորը, անդրադառնում մեր ժողովրդի այս ամենացավոտ հարցին: Երևի՞ թե մեր ժողովրդի ճակատին ընդմի՞շտ դաջված է գաղթական լինելու հանգամանքը: Հարցնում եմ բոլորիդ. հայ ժողովրդի կենաց այս մորմոքիչ հարցում ո՞վ է մեղավոր...

Երբ հայտնի դարձավ, որ այդ ծեր ամուսինները նույնպես վանեցիներ են և վերագաղթականներ, իմ ծնողների և այդ ծեր ամուսինների միջև ծայր առավ մտերմիկ, հարազատ, սրտահույզ մի անվերջանալի զրույց: Տեղավորվելով հյուրասենյակի աթոռներին, նրանք երկա՛ր խոսեցին գաղթի արհավիրքների մասին, իրենց տառապանքներից, կրած անդառնալի կորուստներից, հայրենի Վանից, այնտեղ անցկացրած ոչ վաղ անցյալի իրենց երջանիկ օրերից...

Ցավոք սրտի այժմ չեմ հիշում այդ ծեր վերագաղթականների անունները: Ասեմ, սակայն, որ այդ վանեցիների՝ մեր տուն ոտք դնելով, կարծես ճակատագրի բարեկարգիչ, բարեհորոգիչ մի աստղ վերաշողաց իմ գլխավերևում: Դեռևս երկու օր էլ չէր անցել մեր ընտանիքի համար այդ իրադարձային պահից, երբ անակնկալորեն մեր տուն մտան երեք անձեր՝ իմ այնքա՛ն տենչալի Ա-ն իր պատկառազդու և գեղեցկատես ծնողների հետ: Առաջին պահին ես չկարողացա զսպել իմ շփոթմունքը: Սա ի՞նչ հրաշք էր, կյանքի իրադարձությունների նախախնամական ինչպիսի՞ վերադասավորություն և վերիմաստավորում...

Իմ շփոթվածությունը չվրիպեց Ա-ի ծնողների ուշադրությունից: Ա-ի հայրը ձեռքը փաղաքշորեն քսեց գլխիս և մտերմաբար ասաց.

- Հյուր չե՞ս ընդունի:

Ինձ այս անհարմար, անելանելի վիճակից դուրս բերեցին իմ ծնողները, որոնք այդ պահին դուրս եկան և ներս հրավիրեցին եկվորներին: Զմոռանամ ասել, որ ես Ա-ի ծնողներին ճանաչում էի առաջին իսկ դասարանից: Ես ծանոթ էի նրանց:

Ծնողներս հարգալիցորեն հյուրերին ուղեկցեցին պատշգամբ: Դեռևս չէին տեղավորվել իրենց աթոռներին, երբ կից սենյակից դուրս եկան մեր կենվոր ծեր գաղթականները և գրկախառնվեցին նորեկների հետ: Այս անսպասելի ջերմ վերաբերմունքից ես անմիջապես կանխազգացի, որ նրանք մոտ հարազատներ

են: Իսկ երբ գրկախառնության ընթացքում Ա-ն մի քանի անգամ գորովալի արտաբերեց «տատի՛կ», «պապի՛կ» ինձ համար այնքա՛ն հարազատ բառերը, իմ կանխագուշակումներն արդեն կասկած չէին հարուցում: Քիչ հետո պարզվեց ողջ իրողությունը: Ա-ի մայրը նորաբնակ գաղթականների դուստրն էր: Մեր ամուսինները, կրկին որպես գաղթական, Դոնի-Ռոստովից Երևան տեղափոխվելուց հետո, որոշ ժամանակ անցկացրել էին իրենց դստեր տանը, այնուհետև տեղափոխվել մեզ մոտ:

Վերջապես ես գտա մանկական իմ անհո՛ւյս երազանքի ընդհատված ուղին: Վերջապես ես երևի թե հաճախ պետք է վայելեի ինձ համար այնքա՛ն անձկալի Ա-ի լուսաշող ներկայությունը:

***

Եվ այսպես, անցավ ինձ համար հոգեկան բերկրալի ևս երկու տարի: Պատճառը՝ Ա-ի հետ հաճախակի հանդիպումներն էին: Սակայն կատարվեց անսպասելին: Կարճ տևեց իմ և Ա-ի հոգեբովանդակալից կյանքի օրերը: 1945 թվականին, պատերազմի հաղթական ավարտից մի քանի ամիս առաջ, այս երկու տարիների ընթացքում ինձ համար այնքա՛ն հարազատ դարձած գաղթական մեր ծեր ամուսինները հանկարծակի լքեցին մեզ, հեռացան մեր տանից: Միայն չեմ հիշում, նրանք կրկին վերադարձան Դոնի-Ռոստո՞վ, թե՞ մնացին Երևան քաղաքում: Ինձ համար ընդմի՛շտ մնաց անհայտ: Այս «վարմունքով» նրանք չգիտակցեցին, որ մեկընդմիշտ զրկելու էին ինձ այնքա՛ն հոգեմոտ, հոգեհարազատ ու խիտ տեսչալի իմ Ա-ի հետ հանդիպումներից ու շփումներից: Իսկ ինչո՞ւ, կհարցնեք դուք, ես չէի՞ կարող ժամադրվել նրա հետ, ինչպես հիմա, և պահպանել մեր հոգևոր կապերը: Ո՛չ, կրկի՛ն ոչ: Այն ժամանակ մարդկային բարոյական նորմերի կիրառությունը կյանքում չափազանց բարձր հիմքերի վրա էր և ոչ՝ նման այսօրվան: Ցուրաքանչյուր ոք, մեծ թե փոքր, իր տեղում էր և իր դիրքում, ուներ իր տարիքին համապատասխան իրավունքներ և պարտականություններ: Բոլոր ժամանակներում էլ, իհարկե, բացառություններ եղել են, բայց այդ շեղումները որոշակի տարածում չեն ստացել կյանքում: Խոսքս այն մասին է, որ մեր ժողովուրդն այն ժամանակ կենցաղային-բարոյական հարցերում խիստ պահպանողական էր՝ խոսքիս լիարժեք դրական իմաստով:

Ինչնէ, չերկարացնենք: Թույլ տվեք երկու խոսք ասել վերջին այս տարիների ընթացքում իմ և Ա-ի միջև սրտամոտ փոխհարաբերությունների մասին: Ա-ն, հանգամանքների բերումով և ի բարեբախտություն ինձ, ինչպես արդեն գիտեք, ծեր ամուսինների՝ մեր տուն բնակություն հաստատելուց հետո, սկսեց հաճախակի այցելել իր հարազատներին՝ տատին ու պապին, ծնողների հետ կամ առանց նրանց: Այսպիսի այցելությունների «մեղավորը» երևի թե մի քիչ էլ ես էի: Ես դա բացահայտ կերպով զգում էի: Երբ Ա-ն այցելության էր գալիս իր տատին ու պապին, շատ ժամանակ չանցած՝ նա արդեն իմ կողքին էր լինում, ինձ հետ: Պատճառը՝ ես այն ժամանակ սիրողաբար զբաղվում էի նկարչությամբ: Անտարակույս, իհարկե, ես չէի տիրապետում նկարչական արվեստի նրբին գաղտնիքներին, բայց անկեղծ նվիրումով զբաղվում էի այդ գործով և հոգեկան մեծ բավականություն ստանում: Նկարում էի մատիտով կամ ջրաներկով: Իմ և Ա-ի հարազատներին թվում էր, թե նա ինձ է մոտենում՝ իմ զբաղմունքի նկատմամբ դրսևորած հետաքրքրասիրությունից: Բայց ամենևին էլ այդպես չէր: Մեր մանկա-պատանեկան հոգիներն ու սրտերը տենչում էին միմյանց: Ես որևէ պատճառ կամ առիթ չունեի նրանց տուն այցելելու: Երկսեռ դպրոցն էլ՝ չկար...

Այն օրերին, երբ ես չէի հանդիպում Ա-ին, չէի վայելում նրա քաղցր ներկայությունը, այդ օրերն ինձ թվում էին անիմաստ, անբովանդակ, սին դատարկություն: Չեմ սխալվի, եթե ասեմ, որ այդպես էր նաև Ա-ի համար, որովհետև երբ ես հանդիպում էի նրան, նրա աչքերը պայծառորեն ու անթաքույց շողշողում էին, և այդ շողքը, ինչպես անշեղորեն դեպի նպատակակետը սուրացող նետ, անմիջապես խոցում էր, մխրճվում հոգուս խորքը՝ այնտեղ, իհարկե, ոչ թե ցավ, այլ խտղտանքի ու բերկրանքի ալեկոծություն առաջացնելով:

Այս կարճ ժամանակընթացքում Ա-ի տատիկն ու պապիկը ինձ համար նույնպես դարձել էին հարազատներ, թեև ժողովրդական ասացվածքն ասում է՝ «Ձվածեղի խաթեր թավայի պոչն են համբուրում»: Ես համոզված կերպով ասում եմ, որ քոլորովին էլ այդպես չէր: Այս կարճ ժամանակաընթացքում ես ներքուստ կարծես նույնպես հարազատ էի դարձել նրանց: Նկարելուս պահերին այդ ծեր գաղթականները հաճախ մոտենում էին ինձ, գովաբանական խոսքեր ասում, ոգևորում, որոշ դիտողություններ անում՝ իհարկե ոչ քոլոր դեպքերում նպատակային և ճիշտ: Այդ պահերին ես ինձ անասելի շոյված և երջանիկ էի զգում: Նրանց նկատմամբ իմ տածած անկեղծ վերաբերմունքի պատճառը երևի թե այն հանգամանքներն էին, այն տառապալից և օրհասական օրերը, որոնցից անմասն չէին մնացել և ճակատագրորեն «վայելել» էին նաև իմ ծնողները...

Վերջին հարյուրամյակների մեր ժողովրդի ճակատագրին բնորոշ այս զույգ ծեր թափառականների՝ մեր տանից հեռանալով, Ա-ն ինձ համար դարձավ մտապատկեր հուշ: Դրանից հետո Ա-ն այլևս չայցելեց մեր տուն: Այդ օրից ես երկա՛ր ժամանակ տեղս չէի գտնում: Կարծես ամեն ինչ ինձ համար տակնուվրա էր եղել: Ես հոգեկան մեծ ցնցում ապրեցի՝ գիտակցելով, որ այդ օրից ես ընդմիշտ կորցրեցի իմ անմեղ ու սուրբ Ա-ին: Այդ օրից այլևս ես չվայելեցի նրա անմե՛ղ աչքերից դուրս ժայթքող պատանեկան անվերահսկելի զգացմունքների ներաշխարհային պոռթկումները...

Չար ճակատագրի դաժան ու անողոք հարվածով այդ օրից Ա-ն ինձ համար մնաց որպես անդառնալի, անվերականգնելի, անվերագտնելի հոգեալեկո՛ծ մի հուշ...

«Երանի իցէ առն որ արհամարհիցէ զամենայն վասն երկիւղածութեան, իսկ խիստն սրտիւ՝ անկցի ի չարիս» (ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ ԻԸ 14):